ՊԱՏԻ ԹԵՐԹԵՐԻ ԽՄԲԱԳԻՐՆԵՐԻ ՅԵՎ
ԲԱՆԳՅՈՒՂԹՂԹԱԿԻՑՆԵՐԻ ԿՈՒՐՍԵՐ

# Պ Լ Ա Ն

## ՊԱՏԻ Թ Ե Ր Թ Ե Ր Ի ԽՄԲԱԳԻՐՆԵՐԻ ՅԵՎ ԲԱՆԳՅՈՒՂԹՂԹԱԿԻՑՆԵՐԻ ՄԱՍՍԱՅԱԿԱՆ ԴԱՍԸՆԹԱՑՆԵՐԻ ԿԱԶՄԱԿԵՐՊՄԱՆ ՀԱՄԱՐ

07
Դ-67

«Խորհրդային Հայաստան»-ի խմբագրության

ՅԵՐԵՎԱՆ 1930

22.07.2013
14979
07
Պ-67
23 JUN 2009

# ՊԼԱՆ

## ՊԱՏԻ ԹԵՐԹԵՐԻ ԽՄԲԱԳԻՐՆԵՐԻ ՅԵՎ ԲԱՆԳՅՈՒՂԹՂԹԱԿԻՑՆԵՐԻ ՄԱՍՍԱՅԱԿԱՆ ՈՒՍՈՒՑՄԱՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՄԱՆ ՀԱՄԱՐ

ՀամԿ(բ)Կ Կենտկոմի վորոշման համաձայն, կազմակերպվում են մեկ տարվա մասսայական դասընթացներ ձեռնարկությունների, կոլխոզների, հիմնարկությունների պատի թերթերի խմբագիրների, ինչպես նաև բանգյուղթղթակիցների համար:

Դասընթացների կազմակերպման և նրանց աշխատանքի անմիջական պատասխանատվությունը դրվում է ՀամԿ(բ)Կ Բազկոմների և շրջկոմների, քաղաքային և շրջանային թերթերի խմբագրությունների վրա:

Դասընթացների առջև խնդիր է դրված՝ բարձրացնել պատի թերթերի խմբագիրների, խմբագրական կոլեգիայի անդամների և ակտիվ թղթակիցների հանրակրթական մակարդակը, ծանոթացնել նրանց բոլշևիկյան մամուլի աշխատանքի հիմնական սկզբունքներին, խմբագրմանը, պատի թերթի մասսայական աշխատանքին և ձևավորման տեխնիկային: Ուսուցումը պետք է նպաստի պատի թերթերի աշխատանքի բարելավմանը և լավագույն, առավել ընդունակ բանգյուղթղթակիցներին պատրաստելու գործին, նրանց առաջ քաշելով ստորին մամուլի աշխատանքի և շրջանային թերթերի խմբագրությունների մեջ:

Դասընթացները կազմակերպվում են քաղաքային,

շրջանային թերթերի, ֆաբրիկա-գործարանային, տրանսպորտային, սովխոզների բազմատիրաժների խմբագրություններին կից։

Դասընթացներում սովորելու ժամկետը սահմանվում է 1940 թ. փետրվարի 15-ից մինչև 1941 թվի փետրվարի 15-ը։ Դասընթացների ուսման պլանը կառուցվում է այն հաշվով, որպեսզի յուրաքանչյուր կուրսանտ ինքնուրույն կերպով պարապի միջին հաշվով օրական յերկու ժամ։

Դասընթացների ուսման պլանում նախատեսվում են հետևյալ հարցերը.

1) Լավագույն պատի թերթերի աշխատանքի փորձը, խմբագրական կոլեգիաների աշխատանքի կազմակերպումը, պատի թերթի ձևավորման տեխնիկան, պատի թերթի դերը և նշանակությունը։

2) Պատի թերթերի խնդիրները առանձին կամպանիաների և կուսակցության ու կառավարության միջոցառումների կիրառման գործում։

3) Մայրենի լեզու։

4) Աշխարհագրություն։

## ՈՒՍՈՒՑՄԱՆ ՍԻՍՏԵՄԸ

Շրջանային թերթերի և բազմատիրաժների խմբագրություններին մեթոդական օգնություն ցույց տալու նպատակով պատի թերթերի խմբագիրների և բանգյուղթղթակիցների դասընթացների համար «Բոլշևիստսկայա պեչատ» ամսագիրը հրատարակում է ծրագիր, ինչպես նաև գրականություն և տեղեկատու նյութեր կուրսանտների, և մեթոդական ձեռնարկներ՝ կոնսուլտանտների համար։

Գրականությունն ուղարկվում է խմբագրության հասցեյով՝ նրանից հայտ ստանալուց և դրամ փոխադրվելուց հետո՝ յուրաքանչյուր կուրսանտի համար



տարեկան 7-ական ռուբլու հաշվով (խմբագրության մասսայական աշխատանքի միջոցներից)։

Շրջանային թերթերի (բազմատիրաժների) միջոցով նրանց կողմից ուղարկված հայտի համաձայն, յուրաքանչյուր կուրսանտի բրոշյուրներ են ուղարկվում տանն ինքնուրույն կերպով ուսումնասիրելու համար։ Ինքնուրույն ուսուցման պրոցեսում կուրսանտների մեջ առաջացած հարցերի պարզաբանման համար տեղերում շրջանային թերթի (բազմատիրաժի) խմբագրի ղեկավարությամբ կազմակերպվում են կոնսուլտացիաներ։ Կոնսուլտացիաները տրվում են ամիսը յերկու անգամից վոչ պակաս, չորսական ուսուցման ժամով։ Կոնսուլտանտներին օգնելու համար «Բոլշևիստսկայա պեչատ» ամսագիրը յուրաքանչյուր բրոշյուրի մեջ դրված մեթոդական նամակ է ուղարկում, մատնանշելով, թե ինչպես պետք է տրվի կոնսուլտացիան, ինչպես պետք է պատրաստվել պարապմունքների համար, ինչպիսի գրականության հետ պետք է ծանոթանա կոնսուլտանտը նախօրոք։

Միութենական հանրապետություններում հանրապետական թերթերի խմբագրությունները պետք է կազմակերպեն բրոշյուրների թարգմանությունը և հրատարակությունը մայրենի լեզվով։

## ԿՈՄՊԼԵԿՏԱՎՈՐՄԱՆ ԿԱՐԳԸ

Դասընթացների կոմպլեկտավորումը կատարվում է քաղկոմների, շրջկոմների (ձեռնարկության կուսբյուրոյի) և քաղաքային ու շրջանային թերթերի (բազմատիրաժների) խմբագիրների կողմից։ Դասընթացներում սովորելու համար կուսակցական, կոմյերիտական կազմակերպությունների օգնությամբ պետք է ընտրվեն պատի թերթերի լավագույն խմբագիրները, խմբկոլների անդամները և առավել ընդունակ, թերթի գործը սիրող բանգյուղթղթակիցները։ Դաս-

ընթացների կոմպլեկտավորման ժամանակ հատուկ ուշադրություն պետք է դարձնել ուսուցման մեջ ստախանովական և ստախանովուհի բանգյուղթղթակիցներին ներգրավելու վրա: Կուրսանտների ընտրությունը կատարվում է անձնապես շրջանային թերթի խմբագրի (բազմատիրաժի խմբագրի) և ՀամԿ(բ)Կ շրջկոմի ներկայացուցչի կամ կուսբյուրոյի քարտուղարի կողմից: Յուրաքանչյուր շրջանային թերթի կամ բազմատիրաժի խմբագրության դասընթացների համար միջին հաշվով պետք է ընտրի 30—40 մարդ: Կուրսանտների վերջնական ցուցակը հաստատվում է տեղական կուսակցական կազմակերպության (ՀամԿ(բ)Կ շրջկոմի, ձեռնարկության կուսբյուրոյի) կողմից:

Դասընթացներում կատարվող ընդունելության ժամանակ հարկավոր է հաշվի առնել, որ դասընթացների ծրագիրը կազմելիս՝ նախատեսվել են այնպիսի ունկնդիրներ, որոնք ունեն տարրական դպրոցից (չորրորդ դասարանի) ոչ պակաս ծավալի գիտելիքներ: Այն բանգյուղթղթակիցները, որոնք լրիվ և ոչ լրիվ միջնակարգ դպրոցի կրթություն ունեն, մայրենի լեզվի և աշխարհագրության առաջադրանքները ուսումնասիրում են ըստ ցանկության, սակայն նրանք չեն ազատվում դասընթացներում թերթի աշխատանքի պրակտիկան և կուսակցության ընթացիկ քաղաքականությունն անցնելուց:

## ԿՈՆՍՈՒԼՏԱՆՏՆԵՐԻ ԴԵՐԸ ՅԵՎ ԽՆԴԻՐՆԵՐԸ

Վորպես մայրենի լեզվի և աշխարհագրության կոնսուլտանտներ պետք է հրավիրվեն դպրոցների այն լավագույն դասատուները, վորոնց աշխատանքի համար վճարվում է շրջանային թերթի (բազմատիրաժի) խմբագրության միջոցներից: Թերթի աշխատանքի պրակտիկայի վերաբերյալ կոնսուլտացիան տալիս են



շրջանային թերթի (բազմատիրաժի) ղեկավար աշխատողները:

Կոնսուլտացիան ոգնության կարեվորագույն ձևերից մեկն է հանդիսանում պատի թերթերի խմբագիրների ուսուցման գործում:

Կոնսուլտացիայի ժամանակ կուրսանտներին մեթոդական ոգնություն պետք է ցույց տրվի ուսուցման նյութի ուսումնասիրման գործում, պետք է պարզաբանվեն բրոշյուրների ուսումնասիրության պրոցեսում նրանց մեջ առաջացած հարցերը, պետք է վերլուծվեն կոնտրոլ աշխատանքները: Կոնսուլտացիաները կոնկրետ ոգնություն պետք է ցույց տան պատի թերթերի խմբագիրներին՝ պատի թերթերի լույս ընծայման գծով նրանց կատարած պրակտիկ աշխատանքում:

## ԿՈՆՍՈՒԼՏԱՑԻԱՆԵՐԻ ԿԱՐԳԸ

Կոնսուլտացիաները տրվում են ամիսը յերկու անգամ, նախորոք սահմանված որերին: Շրջաններում խմբեր կազմակերպելու ժամանակ հարկավոր է հաշվի առնել այս կամ այն կոլխոզի հեռավորությունը շըրջանային կենտրոնից և ըստ հնարավորության ուսումնական կայանը մոտեցնել բանգյուղթղթակիցներին՝ փնջային պարապմունքներ կազմակերպելու միջոցով: Կուրսանտները պարապմունքների յեն գալիս իրենց պատի թերթերով և կատարած ուսումնական առաջադրանքներով: Խմբակային պարապմունքների ժամանակ կոնսուլտանտը վերլուծում է կուրսանտների աշխատանքը, տալիս է նրա գնահատականը, ինչպես նաև առաջադրանքներ է տալիս հաջորդ պարապմունքի համար:

Հերթական բրոշյուրը ուսումնասիրելու հետ միասին՝ կոնսուլտանտը կատարում է պատի թերթերի և բանգյուղթղթակցական թղթակցությունների վերլու-

ծությունը, այդպիսով ուսումնական պարապմունք-
ները կապելով պատի թերթերի լույս ընծայման
պրակտիկ աշխատանքի հետ: Յուրաքանչյուր կոնսուլ-
տացիայի ժամանակ մեկ ժամ հատկացվում է ընթա-
ցիկ քաղաքականության հարցերին (կենտրոնական
թերթերի և ժուռնալների նյութերի ընթերցմանն ու
վերլուծմանը):

Անհրաժեշտ է բոլոր կուրսանտներին հանձնարա-
րել՝ ուղարկված բրոշյուրի ուսումնասիրությունից
հետո կազմակերպել նրա ընթերցումը և վերլուծումը
իր պատի թերթի խմբկոլում՝ բրիգադային թերթերի
խմբագիրների և բանգյուղթղթակիցների մասնակցու-
թյամբ:

Շրջանային, քաղաքային թերթերի խմբագիրները
ամիսը մեկ անգամ մարզկոմի, յերկրկոմի, միութենա-
կան կոմկուսակցությունների կենտկոմների պրոպա-
գանդայի և ագիտացիայի բաժինները մանրամասն
ամփոփագրեր պետք է ուղարկեն ուսման ընթացքի
և կուրսանտների առաջադիմության մասին՝ յուրա-
քանչյուր ուսումնասիրված բրոշյուրի գծով:

Գլավլիտի լիազոր Կ—1281 Պատվեր № 109· Տիրաժ 500
Հանձնված է արտադրության 29/I 1940 թ.
Ստորագրված է տպագրության 29/I 1940 թ.

Հայկական ԽՍՀ ԺԿԽ-ին կից «Խորհրդային Հայաստան» հրատ. տպարան, Յերևան

ՀՍԽՀ-ССРА.

ՀՀ Ազգային գրադարան
NL0143948

57

14979

Գրի